

ԿԱՐԾԻՔ

««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ նկատառումները ներկայացվում են ստորև.

1. ««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի¹

1) 2-րդ հոդվածում՝

ա) «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում² լրացվող նոր 3.1-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Օրենքով սահմանված անձնական տվյալներ մշակող պետական մարմինները կարող են առանց անձի համաձայնության Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով դրանք փոխանցել կենդանիների և մարդու համար ընդհանուր հիվանդությունների արձանագրման, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում կանխարգելիչ միջոցառումներ, այդ թվում բժշկական օգնությունը և սպասարկումը կազմակերպելու և իրականացնելու նպատակներով:»

բ) նախատեսվում է Օրենքը լրացնել նոր՝ 3.2-րդ հոդվածով՝ «Բժշկական գաղտնիքը և դրա փոխանցմանն ու մշակմանը ներկայացվող պահանջները» վերտառությամբ:

Օրենքի 1-ին՝ հիմնական հասկացությունները սահմանող հոդվածով, սահմանված չէ բժշկական գաղտնիքի հասկացությունը և այն սահմանվում է նոր լրացվող 3.2 հոդվածով:

¹ Այսուհետ՝ Նախագիծ

² Այսուհետ՝ Օրենք

Ավելին, Նախագծով տրված բժշկական գաղտնիքի սահմանումը բավականին հստակ և որոշակի չէ, ինչը կարող է գործնականում տարաբնույթ մեկնաբանվել: Այսպես, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին: Ավելին, ՀՀ Սահմանադրական դատարանն 13.05.2008թ. իր թիվ ՍԴՈ-753 որոշման մեջ, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, հայտնել է դիրքորոշում, համաձայն որի իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն, որը պետք է լինի բավականաչափ մատչելի, որպեսզի իրավունքի սուբյեկտները համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կանխորոշելու, թե տվյալ դեպքում իրավական ինչ նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը, նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը:

Նույնաբովանդակ իրավական դիրքորոշումներ են տեղ գտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներում (օրինակ՝ Սանդեյ Թայմս ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճիռ, 1979 թ. ապրիլի 26-ի վճիռը, գանգատ թիվ 6538/74, կետ 49):

Գտնում ենք, որ ավելի նպատակահարմար է բժշկական գաղտնիքի հասկացությունը սահմանել Օրենքի 1-ին հոդվածում՝ միաժամանակ ավելի հստակեցնելով և որոշակիացնելով վերջինիս ձևակերպումը. օրինակ՝ «Բժշկական գաղտնիք՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար դիմելու կամ ստանալու ընթացքում անձի առողջական վիճակի մասին հավաքագրված և ամրագրված տեղեկատվություն:»

գ) Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող Օրենքի 3.2-րդ հոդվածի վերնագրում, ինչպես նաև 8-րդ մասում համապատասխանաբար օգտագործվում է «բժշկական գաղտնիքը և դրա փոխանցմանն ու մշակմանը ներկայացվող պահանջները» և «բժշկական գաղտնիք համարվող տվյալներ մշակողները» եզրույթները, որոնց հասկացությունները, հստակորեն սահմանված չեն ոչ՝ Նախագծով և ոչ՝ էլ Օրենքի 1-ին՝ հիմնական հասկացությունները սահմանող հոդվածով, ինչը գործնականում օրենքի տարաբնույթ մեկնաբանման տեղիք կարող է տալ՝ արդյունքում վիճահարույց դարձնելով վերջինիս գործնական կիրառումը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն եթե նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նոր կամ բազմիմաստ կամ այնպիսի հասկացություններ կամ տերմիններ, որոնք առանց պարզաբանման միանշանակ չեն ընկալվում, ապա այդ իրավական ակտով պետք է տրվեն դրանց սահմանումները:

Եկնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է Օրենքի 1-ին հաղվածում կատարել լրացում՝ վերոնշյալ եզրույթների հասկացությունները հստակորեն սահմանելու համար:

2) Նախագծի վերոնշյալ հոդվածի 8-րդ մասի համաձայն Օրենքի խախտմամբ բժշկական գաղտնիք համարվող տվյալների ապօրինի *հավաքելը, պահելը, օգտագործելը* կամ *փարածելը* կամ *հրապարակելը* առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն: Այն պարագայում, երբ սույն կետի բ) մասի համաձայն Նախագծում սահմանվի բժշկական գաղտնիքի մշակում եզրույթը, վերոնշյալ դրույթում «տվյալների ապօրինի *հավաքելը, պահելը և օգտագործելը*» բառերը կարող են փոխարինվել «մշակել» բառով:

Որպես օրինակ նշենք «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, որի 3-րդ հոդվածի համաձայն անձնական տվյալների *մշակում* է հանդիսանում անկախ իրականացման ձևից և եղանակից (այդ թվում՝ ավտոմատացված, տեխնիկական ցանկացած միջոցներ կիրառելու կամ առանց դրանց) ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ, որը կապված է անձնական տվյալները *հավաքելու* կամ ամրագրելու կամ մուտքագրելու կամ համակարգելու կամ կազմակերպելու կամ պահպանելու կամ օգտագործելու կամ վերափոխելու կամ վերականգնելու կամ փոխանցելու կամ ուղղելու կամ ուղեփակելու կամ ոչնչացնելու կամ այլ գործողություններ կատարելու հետ:

Ավելին, Նախագծում և Օրենքի հիմնական հասկացություններում տրված չէ «բժշկական գաղտնիք համարվող տվյալների օգտագործում» եզրույթը, ինչն անհրաժեշտ է սահմանել Օրենքի 1-ին՝ հիմնական հասկացությունները սահմանող հոդվածում:

Ինչ վերաբերում է Նախագծի վերոնշյալ կետում օգտագործվող «*փարածելը* կամ *հրապարակելը*» եզրույթին, ապա նշենք, որ Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող Օրենքի 3.2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն բժշկական գաղտնիք համարվող տվյալների փոխանցում է հանդիսանում այդ տվյալների՝ որոշակի կամ անորոշ շրջանակի անձանց փոխանցելուն կամ դրանց հետ ծանոթացնելուն ուղղված որևէ գործողություն, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով գաղտնիք համարվող տվյալները *հրապարակելը*, տեղեկատվական հաղորդակցման ցանցերում տեղադրելը կամ այլ եղանակով այլ անձի մատչելի դարձնելը: Ստացվում է, որ Նախագծի իմաստով «փոխանցել» եզրույթը ներառում է նաև «հրապարակել»-ը, ուստի Նախագծի վերոնշյալ դրույթից առաջարկում ենք հանել «հրապարակել» բառը:

Հաշվի առնելով այն, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները

կամ բառակապակցությունները, առաջարկում ենք հստակեցնել վերոնշյալ ձևակերպումները:

3) Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքում լրացնվող նոր 3.2-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի «ա.» ենթակետի համաձայն՝ բժշկական գաղտնիք համարվող տվյալները, առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության, կարող են փոխանցվել միայն առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնին, ներառյալ՝ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջության բնագավառում գործունեության իրականացնող պետական կազմակերպություններ՝ վարակիչ և *ոչ վարակիչ հիվանդությունների* և զանգվածային թունավորումների կամ դրանց սպառնալիքի դեպքում:

Ի տարբերություն վարակիչ հիվանդությունների՝ պարզ չէ վերոնշյալ դրույթում *ոչ վարակիչ հիվանդությունների դեպքում* առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության բժշկական գաղտնիք համարվող տվյալների փոխանցման հնարավորության սահմանման նպատակը: Ուստի, առաջարկում ենք վերոնշյալ ենթակետից հանել «և ոչ վարակիչ հիվանդությունների» բառերը:

4) Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվող 3.3-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ *բժշկական փաստաթղթերում անձի նույնականացումը բացառող միջոցների կիրառման պարասխանատուները բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողն և տվյալ բժշկական փաստաթուղթը վարող բուժաշխատողն է:*

Հաշվի առնելով այն, որ Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 3.2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ բժշկական գաղտնիք չեն համարվում սույն հոդվածի 1-ին մասում նշված անանուն տվյալները և անանուն տվյալները չեն կարող ներառել որևէ տվյալ, որով հնարավոր կլինի ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը, ապա տվյալ պարագայում ստացվում է, որ բժշկական փաստաթղթերում անձի նույնականացումը բացառող միջոցների կիրառումը փաստորեն բժշկական գաղտնիք համարվող տեղեկությունների պաշտպանությանն ուղղված գործողություններն են:

Ավելին, Նախագծին կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի և տվյալ բժշկական փաստաթուղթը վարող բուժաշխատողի կողմից վերոնշյալ հոդվածով սահմանված պարտականությունը չկատարելու համար պատասխանատվություն նախատեսված չէ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք հստակեցնել նշված արարքը և վերջինիս համար պատասխանատվության տեսակը:

5) Հաշվի առնելով այն, որ «առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության կամ օրենքով չնախատեսված դեպքերում բժշկական գաղտնիքի փոխանցումն» արդեն իսկ ենթադրում է ապօրինի գործողություն, առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 3.2-րդ հոդվածի 5-րդ մասից հանել «ապօրինի» բառը:

6) Առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 3.2-րդ հոդվածի 8-րդ մասում թողնել կամ «օրենքի խախտմամբ», կամ «ապօրինի» բառերը:

7) Նախագծի 5-րդ հոդվածով նախատեսված Օրենքի նոր խմբագրությամբ 5-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք (պացիենտ)* իրավունք ունի իրազեկ լինել իր հիվանդությանը և համաձայնություն տալ բժշկական օգնության և սպասարկման տրամադրման համար:

Բացի այդ, Նախագծի 12-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսվում է գործող օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի ժա. կետից հետո լրացնել նոր ժբ. կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «պացիենտին բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելուց առաջ, իսկ անգիտակից կամ կյանքին սպառնացող վիճակում գտնվող պացիենտներին գիտակցության գալուց կամ կյանքին սպառնացող վտանգի վերացումից հետո իրազեկել պացիենտի իրավունքների և պարտականությունների մասին՝ *նրան կամ նրա օրինական ներկայացուցչին տրամադրելով իրազեկման թերթիկ*: Պացիենտի իրավունքների և պարտականությունների իրազեկման թերթիկի օրինակելի ձևը և տրամադրման կարգը հաստատում է առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը:»:

Միաժամանակ, Օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է, որ մարդու համաձայնությունը բժշկական միջամտության համար անհրաժեշտ պայման է, բացի սույն օրենքով նախատեսված դեպքերից: 18 տարին չլրացած կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված պացիենտին, ինչպես նաև այն դեպքերում, երբ պացիենտի վիճակը թույլ չի տալիս արտահայտել իր կամքը, բժշկական միջամտության համար համաձայնությունը տրվում է նրա օրինական ներկայացուցչի կողմից: Օրինական ներկայացուցչի բացակայության դեպքում, եթե բժշկական միջամտությունը հետաձգման ենթակա չէ, բժշկական միջամտության վերաբերյալ որոշումը, ելնելով պացիենտի շահերից, կայացվում է բժշկական խորհրդակցության (կոնսիլիումի), իսկ դրա անհնարինության դեպքում՝ բժշկի կողմից:

Վերոգրյալ դրույթից պարզ է դառնում, որ Օրենքով «բժշկական գործունակության» տարիքը սահմանված է 18 տարեկանը, ինչպես նաև Օրենքը չի նախատեսում 18 տարին չլրացած անձի՝ իր հիվանդությանը իրազեկ լինելու և բժշկական օգնության և սպասարկման տրամադրման համար իր տարիքին և հասունությանը համապատասխան համաձայնություն տալու կամ կարծիք հայտնելու իրավունքը:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի³ 12-րդ հոդվածի համաձայն՝ իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար իրեն վերաբերող բոլոր դեպքերում ապահովվում է իր կարծիքն արտահայտելու իրավունք՝ վերջինիս տարիքին և հասունությանը համապատասխան: Այդ նպատակով երեխային, մասնավորապես, հնարավորություն է տրվում իրեն վերաբերող ցանկացած դատական կամ վարչական քննության ժամանակ ներպետական օրենսդրության դատավարական նորմերով նախատեսված կարգով լսված լինել թե՛ անմիջականորեն, թե՛ իր ներկայացուցչի կամ համապատասխան մարմնի միջոցով:

Ավելին, ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի թիվ 14 Ընդհանուր մեկնաբանության (2013) «երեխայի լավագույն շահերը գնահատելիս հաշվի առնվող հանգամանքները» վերնագրով 1-ին կետի §53-ի համաձայն՝ ցանկացած որոշում, որտեղ հաշվի չի առնվում երեխայի կարծիքը կամ պատշաճ կշիռ չի տրվում այդ կարծիքին, հաշվի առնելով երեխայի տարիքը և հասունությունը, չի հարգում իրենց լավագույն շահերի որոշման գործընթացի վրա ազդելու երեխայի հնարավորությունը:

Միաժամանակ, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխան իրավունք ունի իր շահերը շոշափող ցանկացած հարց լուծելիս ունկնդիր լինելու հարցի քննությանը և արտահայտելու սեփական կարծիքը ընտանիքում, դատական և այլ մարմիններում:

Բացի այդ, միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք երկներում, ինչպիսիք են օրինակ՝ Լիտվան⁴, Կիպրոսը⁵ և այլք, համապատասխան կարգավորումներ են սահմանված բժշկական օգնության և սպասարկման տրամադրման ընթացքում երեխաների կարծիքը հաշվի առնելու և/կամ նրանց համաձայնությունը ստանալու վերաբերյալ:

Չնայած Հայաստանի Հանրապետությունը չի վավերացրել 1997 թվականի Կենսաբանության և բժշկության հետ կապված մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության եվրոպական կոնվենցիան, բայցևայնպես պետք է նշել, որ նշված կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, այն դեպքում, երբ ըստ

³ Այսուհետ՝ Կոնվենցիա

⁴ Լիտվայի Հանրապետության «Պացիենտների իրավունքների և առողջությանը հասցված վնասի փոխհատուցման մասին» օրենք, հոդված 6, մասեր 7 և 8, հոդված 8, մաս 2

⁵ Կիպրոսի «Պացիենտների իրավունքների պահպանման և պաշտպանության» օրենք, հոդված 13 մասեր 3 և

օրենքի անչափահասը չունի բժշկական միջամտության համար համաձայնություն տալու ունակություն, միջամտությունը կարող է իրականացվել միայն իր ներկայացուցչի կամ օրենքով նախատեսված իրավասու մարմնի կամ անձի թույլտվությամբ: *Անչափահասի կարծիքը պետք է հաշվի առնել որպես որոշման կայացման համար առավել հաճախ կիրառվող գործոն՝ իր տարիքին և հասունության աստիճանին համապատասխան:* Կոնվենցիան վավերացրած մի շարք պետություններ նմանատիպ կարգավորումներ նախատեսել են նաև իրենց ազգային օրենսդրությունում⁶:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Նախագծով սահմանել այնպիսի կարգավորում, որը թույլ կտա բժշկական օգնության և սպասարկման գործընթացում հաշվի առնել երեխայի կարծիքը՝ նրա տարիքին և հասունությանը համապատասխան: Ինչպես նաև առաջարկում ենք Նախագծի 5-րդ հոդվածով սահմանված Օրենքի նոր խմբագրությամբ 5-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում «հիվանդությանը» բառը փոխել «հիվանդության մասին» բառերով:

8) Նախագծի 10-րդ հոդվածով նախատեսվում է Օրենքը 17-րդ հոդվածից հետո լրացնել «Մարդու (պացիենտ) պարտականությունները բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս» վերտառությամբ 17.1-րդ հոդվածով:

Հաշվի առնելով այն, որ Նախագծում առկա չեն բավարար երաշխիքներ գործնականում վերոնշյալ դրույթի կիրառումն ապահովելու համար, ինչպես նաև հիմնավորումներում նշված չէ նման դրույթի սահմանման անհրաժեշտությունը, առաջարկում ենք քննարկել բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս պացիենտի պարտականությունները սահմանելու նպատակահարմարությունը:

9) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսված քրեական օրենսգրքի 145-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում միայն բժշկական գաղտնիքի հրապարակման համար:

Սակայն, Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված Օրենքի նոր 3.2 հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ բժշկական գաղտնիք համարվող տվյալների *փոխանցում* է հանդիսանում այդ տվյալների՝ որոշակի կամ անորոշ շրջանակի անձանց փոխանցելուն կամ դրանց հետ ծանոթացնելուն ուղղված որևէ գործողություն, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով գաղտնիք համարվող տվյալները *հրապարակելը*, տեղեկատվական հաղորդակցման ցանցերում տեղադրելը կամ այլ եղանակով այլ անձի մատչելի դարձնելը:

⁶ <https://lirias.kuleuven.be/bitstream/123456789/40142/2/IT013-2007-European-Journal-of-Health-Law.pdf>

Միաժամանակ, Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված Օրենքի նոր 3.2 հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ բժշկական գաղտնիք համարվող տվյալներ մշակողները պարտավոր են պահպանել իրենց աշխատանքային կամ պաշտոնական պարտականությունների կատարման ընթացքում հայտնի դարձած բժշկական գաղտնիք հանդիսացող տվյալները: *Օրենքի խախտմամբ բժշկական գաղտնիք համարվող տվյալների ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը կամ հրատարակելը առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:*

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով սույն գրության 1-րդ կետում տեղ գտած դիտողությունները՝ առաջարկում ենք Նախագծին կից ներկայացված իրավական ակտերով հստակ սահմանել պատասխանատվություն ապօրինի բժշկական գաղտնիքի մշակման, ինչպես նաև օգտագործման և փոխանցման համար:

10) Հաշվի առնելով այն, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի մայիսի 17-ի թիվ ՀՕ-89-Ն օրենքով օրենսգիրքը լրացվել է նոր 47.10-րդ, 47.11-րդ հոդվածներով, առաջարկում ենք կարծիքի ներկայացված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներում համարակալումը սկսել 47.12-րդ հոդվածով:

11) Իրավական ակտերում օգտագործվող հասկացությունների միասնականությունն ապահովելու նպատակով առաջարկում ենք «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսված 47.12-րդ հոդվածում «ներքին ընթացակարգը» բառերը փոխարինել «ներքին կանոնները» բառերով՝ այն համապատասխանեցնելով ՀՀ Կառավարության «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին 2011 թվականի օգոստոսի 20-ի թիվ 1024-Ն որոշման 2.1-րդ կետին:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ